

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 75-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն.

Ազգային ժողովի ընտրության ժամանակ նախնական արդյունքները հրապարակելուց ոչ ուշ, քան 72 ժամ հետո հատուկ համակարգչային ծրագրի միջոցով ամփոփվում են տեխնիկական սարքավորումներից դուրս բերված տվյալները, և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում հրապարակվում են՝

1) տեխնիկական սարքավորման միջոցով տպված քվեարկության կտրոնների ընդհանուր թիվը.

2) անձը հաստատող փաստաթուղթը տեխնիկական սարքավորման մեջ ներմուծելու արդյունքում տպված քվեարկության կտրոնների ընդհանուր թիվը.

3) մասնագետի կողմից անձը հաստատող փաստաթղթի տվյալները ստեղծաշարով տեխնիկական սարքավորման մեջ ներմուծելու արդյունքում տպված քվեարկության կտրոնների ընդհանուր թիվը.

4) տեխնիկական սարքավորման կողմից զորամասում հաշվառված ընտրողների համար տպված քվեարկության կտրոնների ընդհանուր թիվը.

5) տեխնիկական սարքավորման կողմից քվեարկության օրը կազմվող ընտրողների լրացուցիչ ցուցակի ընտրողների համար տպված քվեարկության կտրոնների ընդհանուր թիվը:

Տ Վ Յ Ա Լ Ն Ե Ր

ՀԱՏՈՒԿ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԱՄՓՈՓՎԱԾ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻՑ ԴՈՒՐՍ ԲԵՐՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԸ

h/h	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՏՎՅԱԼԸ
1.	տեխնիկական սարքավորման միջոցով տպված քվեարկության կտրոնների ընդհանուր թիվը	1.572.753
2.	անձը հաստատող փաստաթուղթը տեխնիկական սարքավորման մեջ ներմուծելու արդյունքում տպված քվեարկության կտրոնների ընդհանուր թիվը	1.316.915
3.	մասնագետի կողմից անձը հաստատող փաստաթղթի տվյալները ստեղծաշարով տեխնիկական սարքավորման մեջ ներմուծելու արդյունքում տպված քվեարկության կտրոնների ընդհանուր թիվը	229.757

4.	տեխնիկական սարքավորման կողմից զորամասում հաշվառված ընտրողների համար տպված քվեարկության կտրոնների ընդհանուր թիվը	19.637
5.	տեխնիկական սարքավորման կողմից քվեարկության օրը կազմվող ընտրողների լրացուցիչ ցուցակի ընտրողների համար տպված քվեարկության կտրոնների ընդհանուր թիվը	6.444

Պարզաբանում

Ոչ ճիշտ ենթադրություններից զերծ մնալու նպատակով Կենտրոնական ընտրական հանձնաժողովը պարզաբանում է՝

Ա) Քվեարկության արդյունքների նախնական արձանագրությունում տեխնիկական սարքավորման միջոցով տպված քվեարկության կտրոնների ընդհանուր թիվը նշված է 1.562.960: Նշված թիվը 9793-ով ավելի քիչ է, քան տեխնիկական սարքավորումներից դուրս բերված տվյալները:

Ընտրական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը տարածքային ընտրական հանձնաժողովներից ստացված ընտրական տեղամասերում քվեարկությունների արդյունքների հիման վրա քվեարկության ավարտից ոչ ուշ, քան 24 ժամ հետո, սույն հոդվածի պահանջներին համապատասխան, ամփոփում է Ազգային ժողովի, Երևանի ավագանու ընտրության քվեարկության նախնական արդյունքները, արձանագրությամբ վավերացնում դրանք:

Նույն օրենսգրքի 73-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Ազգային ժողովի, Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ տարածքային ընտրական հանձնաժողովն ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրության մեկ օրինակը քվեարկության ավարտից 24 ժամ հետո ներկայացնում է Կենտրոնական ընտրական հանձնաժողով:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ստանալով ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրության օրինակները իրականացնում է մուտքագրված տվյալների ճշգրտության ստուգում: Իրականացված ստուգման արդյունքներն արտացոլվում են քվեարկության արդյունքների մասին արձանագրությունում:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովում ընթանում է ստացված արձանագրությունների տվյալների համապատասխանության ստուգումը տարածքային ընտրական հանձնաժողովների կողմից մուտքագրված տվյալների հետ: Այս պահին արդեն պարզ է, որ որոշ տեղամասային ընտրական հանձնաժողովների պարագայում առկա է տեխնիկական սարքավորման միջոցով տպված քվեարկության կտրոնների ընդհանուր թվի թերի մուտքագրումներ: Մասնավորապես, թիվ 35/57, 27/21, 20/09, 7/60, 14/15, 31/35, 19/04 ընտրական տեղամասերի քվեարկության արդյունքների արձանագրությունում չի լրացվել տեխնիկական սարքավորման միջոցով տպված քվեարկության կտրոնների թիվը, որը

համակարգիչը ընդունել է 0, երբ տեխնիկական սարքավորումներից դուրս բերված թվով պարզվեց, որ թիվը կազմում է 7.319: Նշվածից ակնհայտ է, որ նախնական արձանագրությունների թվերի և տեխնիկական արձանագրություններից դուրս բերված՝ տեխնիկական սարքավորման միջոցով տպված քվեարկության կտրոնների թվերի միջև տարբերությունը (ի դեպ ըստ արձանագրությունների տվյալների այն ավելի փոքր է) բացառապես մեխանիկական վրիպումների արդյունք է: Ստուգման և համեմատման աշխատանքները շարունակվում են:

Բ) Ըստ սարքավորումների տվյալների տեխնիկական սարքավորման կողմից քվեարկության օրը կազմվող ընտրողների լրացուցիչ ցուցակի ընտրողների համար տպված քվեարկության կտրոնների ընդհանուր թիվը կազմում է 6.444, այն դեպքում, երբ ԿԸՀ նախնական արձանագրությունում նշված է 7: Կատարված ուսումնասիրությամբ պարզվեց, որ ընտրողների ցուցակում նշված ըստ գտնվելու վայրի ընտրողների ցուցակում ընդգրկված ընտրողները ընդունվել են որպես լրացուցիչ ցուցակով ընտրողներ և նրանց տվյալները մուտք են արվել տեխնիկական սարքավորումներ որպես լրացուցիչ ցուցակով ընտրողների, իսկ քվեարկության արդյունքների արձանագրությունը կազմելիս նրանք, ինչպեսև պահանջում է ՀՀ ընտրական օրենսգիրքը հաշվարկվել են որպես հիմնական ցուցակի ընտրողներ: Միաժամանակ, ուսումնասիրությամբ չհայտնաբերվեց որևէ դեպք, երբ նույն անձը գրանցվել է միաժամանակ երկու ցուցակով: Ընտրողների ստորագրած ցուցակները և քվեարկության արդյունքների աղյուսակավորումը հրապարակված են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում և դրանց համադրումից ակնհայտորեն պարզ է դառնում, որ ընտրողները գրանցվելով որպես լրացուցիչ ցուցակի ընտրող չեն գրանցվել հիմնական ցուցակի ընտրող:

Ներկայումս ԿԸՀ մշակում է ծրագրային ապահովման փոփոխությունների նախագիծ, որը կբացառի հետագայում նման թերությունների հնարավորությունը: